ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/175

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.11.2018թ. թիվ 26-3/21258-18 գրությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ալավերդու համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.11.2018թ. թիվ 2237 գրության հիման վրա, 22.11.2018թ. «Ռազովալո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>Ալավերդու համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ալավերդու համայնքապետարանը 16.11.2018թ. թիվ 2237 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ալավերդու համայնքապետարանի կողմից կազմակերպված ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի Կատարող կողմ հանդիսացող «Ռազովալո» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները, որը հանգեցրել է Ալավերդու համայնքապետարանի կողմից պայմանագրի միակողմանի լուծման:

Ալավերդու համայնքապետարանի կողմից Ալավերդի համայնքի փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կամակերպվել է ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Ռազովալո» ՍՊԸ-ն, որի հետ 03.08.2018թ. կնքվել է N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագիր, ըստ որի «Ռազովալո» ՍՊԸ-ն պարտավորվել է կատարել 5.900.000 ՀՀ դրամի աշխատանքներ: Մինչև պայմանագրի ավարտը «Ռազովալո» ՍՊԸ-ն գրավոր ձևով հայտնել է, որ եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով հնարավոր չէ պայմանագրով սահմանված ժամկետում ամբողջ ծավալով ավարտել նախատեսված աշխատանքները և առաջարկել է երկարացնել պայմանագրի կատարման ժամկետը 30 օրացուցային օրով: Հաշվի առնելով «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը և այն հանգամանքը, որ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգումը մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխություններ շարքին, Ալավերդու համայնքապետարանի և «Ռազովալո» ՍՊԸ-ի միջև ի լրումն 03.08.2018թ. կնքված N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագրին, 03.10.2018թ. կնքվել է համաձայնագիր, ըստ որի պայմանագրով ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օր և վերջնաժամկետ է սահմանվել 02.11.2018թ.: Սակայն «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից 02.11.2018թ. դրությամբ պայմանագրով նախատեսված 5.900.000 ՀՀ դրամի աշխատանքների փոխարեն կատարվել են 1.288.320 ՀՀ դրամի աշխատանքներ: Ալավերդու համայնքապետարանը պայմանագրի 3.1.2 կետի համաձայն, առաջարկել է

աշխատանքների կատարման համար սահմանել նոր խելամիտ ժամկետ, որին սակայն «Ռազովալո» ՍՊԸ-ն չի համաձայնվել և 12.11.2018թ. ներկայացրել է 1.288.320 ՀՀ դրամի չափով աշխատանքների կատարումը փաստող հանձնման-ընդունման ակտ, որը ընդունվել է Ալավերդու համայնքապետարանի կողմից:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Ալավերդու համայնքապետարանը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն, տեղեկագրում հրապարակել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:»:

Ալավերդու համայնքապետարանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն համայնքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Ռազովալո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 22.11.2018թ. գրությամբ դիմել է «Ռազովալո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.11.2018թ. թիվ 26-3/21258-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Ռազովալո» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. ՍՑ-ԷՍ-2018/175 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 22.11.2018թ. թիվ 26-3/21258-18 գրությունը, Ալավերդու համայնքապետարանի 16.11.2018թ. թիվ 2237 գրությունը և կից փաստաթղթերը, Ալավերդու համայնքապետարանի և

«Ռազովալո» ՍՊԸ-ի միջև 03.08.2018թ. կնքված N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագիրը, Ալավերդու համայնքապետարանի և «Ռազովալո» ՍՊԸ-ի միջև 03.10.2018թ. կնքված ի լրումն համաձայնագիրը, Պատվիրատուի կողմից 14.11.2018թ. «Ռազովալո» ՍՊԸ-ին ուղղված թիվ 2222 գրությունը, «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից 02.10.2018թ. Ալավերդու համայնքապետարանին ուղղված գրությունը.

Ալավերդու համայնքապետարանի և «Ռազովալո» ՍՊԸ-ի միջև 03.08.2018թ. կնքվել է N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ալավերդի համայնքի փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:
- 1.2 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:
- 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է երկու ամիս:
- 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառած վնասները, եթե.

- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

- բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

- 8.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- 8.6 կետի համաձայն՝ Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, Ընդ որում նույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:
- 8.9 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի օրացուցային գրաֆիկ թիվ 2 հավելվածով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել՝ Պայմանագրի կնքման օրվանից երկու ամիս:

«Ռազովալո» ՍՊԸ-ն 02.10.2018թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ անձրևային եղանակների պատճառով N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագրով սահմանված ժամկետում աշխատանքները հնարավոր չէ ամբողջությամբ իրականացնել:

Աշխատանքներն ամբողջությամբ ավարտելու համար, խնդրում ենք պայմանագրով սահմանված ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:»:

Ալավերդու համայնքապետարանի և «Ռազովալո» ՍՊԸ-ի միջև 03.10.2018թ. կնքված համաձայնագրի (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) 1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ համաձայնագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են ավելացնել N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով

գնման պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 30 օրացուցային օրով:

Համաձայնագիր թիվ 1 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանվել է 02.11.2018թ.:

Ալավերդու համայնքապետարանը 14.11.2018թ. թիվ 2222 գրությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«Ալավերդու համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «Ռազովալո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Կապալառու) միջև 03.08.2018թ. կնքված N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով «Ալավերդի համայնքում փողոցների հենապատերի թափված քարերի և գլխաքարերի վերականգնման աշխատանքների» գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) անբաժանելի մաս կազմող Հավելված 2 օրացուցային գրաֆիկով (Համաձայնագրի կնքման ամսաթիվ՝ 03.10.2018թ.) նախատեսված ժամկետում «Ռազովալո» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 02.11.2018թ. կատարել 5.900.000 ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն մինչև նշված ժամկետը կատարել է 1.288.320 ՀՀ դրամի աշխատանքներ: «Ռազովալո» ՍՊԸ-ին բազմիցս զգուշացվել է, որ Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն սահմանված ժամկետում, այլապես Պայմանագրից բխող տույժերի և տուգանքների կիրառումը ընկերության նկատմամբ կլինի անխուսափելի:

Տեղեկացնում ենք, որ Պայմանագրով սահմանված ժամկետում վերը նշված աշխատանքները «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից չեն կարատվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 ենթակետի «բ» պարբերության պահանջները՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը 4.611.680 ՀՀ դրամ չկատարած աշխատանքի մասով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 ենթակետի «բ» պարբերության պահանջները՝ Ալավերդու համայնքապետարանը 14.11.2018թ. միակողմանի մասնակի լուծում է 03.08.2018թ. կնքված N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով պայմանագիրը:»:

Միաժամանակ Ալավերդու համայնքապետարանը N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 14.11.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ալավերդու համայնքապետարանի և «Ռազովալո» ՍՊԸ-ի միջև 03.08.2018թ. կնքվել է N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագիր:
- N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 2 Հավելվածով՝ օրացույցային գրաֆիկով՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից երկու ամիս:
- «Ռազովալո» ՍՊԸ-ն 02.10.2018թ. գրությամբ Ալավերդու համայնքապետարանին խնդրել է պայմանագրով սահմանված ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
- 03.10.2018թ. Ալավերդու համայնքապետարանի և «Ռազովալո» ՍՊԸ-ի միջև կնքվել է համաձայնագիր, որի համաձայն աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանվել է մինչև 02.11.2018թ.:
- «Ռազովալո» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում աշխատանքները ողջ ծավալով չեն իրականացվել:
- Ալավերդու համայնքապետարանը N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 14.11.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ռազովալո» ՍՊԸ-ն, Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետներում չկատարելովելով՝ խախտել է 03.08.2018թ. կնքված N ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/10 գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ «Ռազովալո» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.11.2018թ. թիվ 26-3/21258-18 գրությամբ «Ռազովալո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ռազովալո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ